ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ե 40/11-2190

«25» 12 2018թ.

ՀՀ, ք Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.`(+374 10) 44-34-80
Հեռ.`(+374 10) 44-29-04
Հեռ.`(+374 60) 37-77-37
Հեռ.`(+374 60) 37-26-56

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դանիելյան,

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/18-1 պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր) նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանված 2018թ. դեկտեմբերի 15-ը, սակայն «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն Պայմանագրով նախատեսված ապրանքներից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը չի մատակարարել «հավի ձու» - 24315 հատ: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2018թ. դեկտեմբերի 25-ից՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված Պայմանագիրը՝ 24315 հատ «հավի ձու» ապրանքի մասով, որի գումարը կազմում է 1093445,55 (մեկ միլիոն իննսուներեք հազար չորս հարյուր քառասունհինգ ամբողջ 55) ՀՀ դրամ: Նշված գումարի չափով Պայմանագրի միակողմանի մասնակի լուծումից հետո՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/18-1» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 9341754,45 (ինը միլիոն երեք հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր հիսունչորս ամբողջ 45) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի վճարման գումարներից ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին կփոխանցի 4920 (չորս հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված

գանձապետական 900005000758 հաշվեհամարին կփոխանցի 719520 (յոթ հարյուր տասնինը հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովման գումար (10%), հիմք՝ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն-որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի դ) կետ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ ԱՐՏՅՈՄ ՄԽՈՅԱՆ

Կատարող՝
Ա.Առաքելյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին
Հեռ.՝ 060 -37-05-30